ՄԽԻԹԱՐ ՄՈԿԱՑԻ.— 1609ին Ս. Յակոբի վանքին մէջ կ'ընդօրինակէ Սաղմոս, աղօթամատոյց եւ Տօնացոյց ձեռագիր մը, Գրիգոր Պարոնտէր պտրքի համար և կը գրէ հետևեալ յիշատակարանը. «... Արդ գրեցաւ Սաղմոսարանս ձեռամբ... գրչի, Մխիթար Մոկացոյ, ի սբ քաղաքս Երուսաղէմ. ընդ հովանեաւ սբ Յարութեանն և սբ Յակոբայ գլխագիր սբ աթոռոյն և այլ ամ. սբ տնօրինութեանց Քս Այ մերոյ. ի յառաջնորդութեանն տր Գրիգորին, որ վերակացու և հերպետ էր սբ Յակոբայ առաքելոյ Աթոռոյն. որ ստացաւ զսբ գիրքս ի հալալ և յարդար վաստակոց իւրոց...: Արդ գրեցաւ ի թուականութեանս Հայոց ՌԾԸ (=1609) (Խապ. Ցուց. տետր 6, էջ 597):

ՄԽԻԹԱՐ ՎՐԴ. ԳԱՆՁԱԿԵՑԻ (Գօշ).— 1196ին ուխտաւորութեամբ այցելած է Տնօրինական Ս. Տեղիքը. Կիրակոս պատմագիր կը վկայէ գրելով (էջ 237), «Ի Ոմէ (=1196) թուին կամեցաւ (Մխիթար) գնալ յերկրպագութիւն մարմնաւոր տնօրինութեան տեառն մերոյ Յսի Քսի ի ս. քաղաքն Երուսաղէմ և լուսաբուխ Գերեզմանին.». իսկ ուրիշ ձեռագիր մը Գօշի Երուսաղէմ այցելութիւնը կը դնէ Ոմէ (= 1198) թուին. (Տաշ. Ցուց. էջ 182): Մխիթար Գօշ վախճանած է 1213ին: Մխիթար Գօշի գլխաւոր երկասիրութիւնն է Դատաստանագիրքը որուն հրատարակութիւնը 1880ին կատարած է Ս. Էջմիածնի միաբան հանգուցեալ Վահան վրդ. Բաստամեանց, ընդարձակ յառաջաբանով և ձեռագրական համեմատութիւններով. փափաքողները կրնան ծանօթանալ Մխիթար վրդ. Գօշի ընդարձակ կենսագրութեան, այդ հրատարակութեան շնորհիւ:

ՄԽԻԹԱՐ ՎՐԴ. ԱՍՏԱՊԱՏՑԻ.—Մբ. 1720ին Նւ. Կարնոյ և Աստապատի:

ՄԽԻԹԱՐ ՎՐԴ.—Մբ. ՏԲ., 1693ին հրաւիրակ, զոր կը յիշէ Մինաս Ամդեցիին Օրագրութիւնը. Նւ. Գողթնեաց և Պայազիտի 1695ին:

ՄԽԻԹԱՐ ՎՐԴ.—Մբ. 1680ին ՏՀ.:

ՄԽԻԹԱՐ ՎՐԴ. ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆ, ՄՈԿԱՑԻ.—Մբ. Ծ. 1828ին. նախ քհ. և ապա կ'ստանայ վեղար 1871ին:

ՄԽԻԹԱՐ ՎՐԴ.—Մբ. 1365ին կը նահատակուի Եգիպտոսի մէջ: